

ՔԱՆՈՒՆՈՒՄ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 Մլճ
Փառապանակ 10 Մլճ
Վերականգնող Կ. Պոլսոյ 4 Մլճ
Փառապանակ 5 Մլճ
Իւրաքանչիւր թերթի գին 60 վրդ
Յանուարի ամիսը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կը լայն:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ՀՈՒՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 14 հոկտ.

Օրէնք շոգեհատը մեկնեցաւ Զի-
վիթա—Վէրիոյ նաւահանգիստէն :
Մեկնած ժամանակ բնաւ ցոյց մը չե-
ղաւ :

Մատրիա 14 հոկտ.

Կըսուի թէ Բարլոսեան զօրաց քա-
նի մը վաշտեր հանրապետական կա-
ռավարութեան հնազանդներն :

Պէրլին 14 հոկտ.

Գաւառական թղթակցութիւն ա-
նուն թերթը կըսէ թէ կայսրը բը-
ժըշկաց խորհրդին հետեւելով խա-
լիս երթալու դիտաւորութենէն ետ
կեցաւ, և ասոր համար իր խորցաւն
յայտնեց խալիոյ թագաւորին :

Եւր—Եօր 14 հոկտ.

Եւրասիոյ հինգ կէսն աւրուե-
ցաւ երեւմէն ինքնութեւն և թէնէսե
դաւառաց մէջ :

Փարիզ 14 հոկտ.

Պուրլանի վրայ Օսմ. Բանակաւոր
45,80, և նոր 45,70 կընէ :

Կը կարծուի թէ վաղը Միսիոն
յանձնաժողովը մէջ կ'ընէ Օրէնքի
և Սպանիոյ խնդիրներն յուղորին, նա-
խարարը պատասխան չափի տան :

Փարիզ 14 հոկտ.

Հանրապետականը իրենք ալ կը
մեղադրեն Սպանիոյ կառավարու-
թեան Գաղղիոյ դէմ բռնած դժբա-
ղի վարմունքը :

Պէրլին 14 հոկտ.

Կայսրն ամառը 20 Ին մեր քաղա-
քը պիտի վերադառնայ :

Սպանիոյ դեսպանը Գաղղիոյ տըր-
քաւ պաշտօնական տեղեկագրին
մէջ պատճէնն ալ մեր կառավարու-
թեան հազդդեց :

Կառավարութեան նպատակաւ
թերթերը կը ջանան հաստատել թէ
Արմիա կոմիտէ խնդրոյն մէջ դատա-
ւորները կատարելապէս անկախ են :
Հետեւաբար արտաքին գործոց նա-
խարարութեան կողմանէ որ և է
ճնշման կատակներն հերքելով Ար-
միա կոմիտէ կամքատաննէն թէ պե-
տութեան իրաւունքը բռնաբարած է :

Կայսրը կը ցաւի որ իր առողջու-
թեան վիճակը չնրեր իրեն խալիս
երթալ և Գերմանիոյ ու իտալիոյ մէջ
հաստատելու բարեկամութեան հա-
ւաստիքը նորոգել :

Մատրիա 14 հոկտ.

Բարլոսեանը 6 Բրաբլ թնդանով,
3000 հրացան և 50000 վաճառաւոր
տանցան, որը Պելժիացի նաւով մը
զրկուած էին կըսուի :

Կառավարութիւնը Բարլոսեանց
գրաւած դաւառաց ծովեղերը պահ-

պանող նաւերուն թիւն աւելցուց :
Պիւքայէի Բարլոսեանը հաշու-
թեան դրօշակ պարզեցին :

Պէրլին 14 հոկտ.

Գարաբոյի վրէժի կուսակցաց կող-
մէ Միլան իշխանին դէմ դաւադ-
րութիւն ներթուած ըլլալուն պատ-
ճառաւ՝ բաղնաթիւն ձերբակալու-
թիւնը եղան :

Պէրլին 15 հոկտ.

Արմիա կոմիտէ դատաւարանը հը-
րապարակաւ պիտի տեսնուի :

Փարիզ 15 հոկտ.

Տօրեկարէ զօրադետը բանտար-
կեցաւ :

Լոնտրա 15 հոկտ.

Անգղիոյ Պանքան իր գրաւորեղծ
հարկերն և հանեց :

Խալիպուրիի դ. քուսէին արու զա-
ւակ մը ծնաւ :

Մատրիա 15 հոկտ.

Բարլոսեանը նորէն յաղթուեցան :
Փարիզ 15 հոկտ.

Այս առաւօտեան Պաշտօնական
Օրագրին մէջ հրատարակուած հը-
րամանագիր մը՝ Տրօմ, Օաղ և Սէն է
Օաղ դաւառին բնորոշները նոյ. Տին
օրը երեւոյթանալան ընտրութիւն
ընելու կը հրաւիրէ :

Միսիոն յանձնաժողովը մէջ տը-
տաքին գործոց նախարար Տըքաղ
դուքան ըսաւ թէ Սպանիոյ կառա-
վարութեան ծանուցագիրը Գաղղիոյ
վերադարձալ հին անկախութիւնը
թիւնները կը ծանուցանէ : Արտաքին
գործոց նախարարն իր պատասխա-
նին մէջ Գաղղիոյ կառավարութեան
Սպանիոյ նկատմամբ բռնած վարմուն-
քին ուղղութիւնը պիտի ցուցնէ :

Իսկ Օրէնք շոգեհատին խնդրոյն
նկատմամբ նախարարը կը յայտնէ
թէ Գաղղիոյ շահուց համեմատ գոր-
ծած է, և կըսէ թէ Պանքան ինքնին
ճանչած է որ իրեն անպատուութիւն
մ'եղած է :

Պաշտ 15 հոկտ.

Բարլոսեանց կողմէ նոր հնազան-
դութիւնը կը ծանուցաւն Մատրի-
ա մէջ : Ասկէց դատ կը ծանուցա-
նեն թէ Հիւսիսային քաղաքներէն մի
քանին Տոն Բարլոսի դէմ որոշում
տուեր են :

Լոնտրա 15 հոկտ.

Օսմ. Բան. 45 13/16
Իսկ 1863 —
» 1869 5 1/4
» 1871 —
» 1872 8 1/4
» 1873 50
Նոր փոխառութիւն 2 1/4
Անգլ. Բան. 92 13/16
Իւլիբրու 15 հոկտ.

Բաղադի Միսիոն—Օրէնք 8 — 3/8
» Պաշտ Տօրեկար 5 1/4 — 3/8
Երաւուն 15000 հակ :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ

Սըվաղի և Կուսակալ Թէքլէտուն
վաշան Հիւսիսային կուսակալ անուանե-
ցաւ փոխանակ փոխանակ Մէհմէտ
Րիւշտի վաշային :

Ֆիլիպէի նախորդ կառավարիչ է-
սատ վաշան Այսթինի կառավարիչ
անուանեցաւ :

Լիվա Ալի վաշան Ասիւրի կառա-
վարիչ անուանեցաւ :

Վահմ. Արքայազմ վաշան երեւոյթ-
թիւ իրիկուն յատուկ շոգեհատով մայ-
րաքաղաքէ մեկնեցաւ դէպ ի Մի-
ջերկրական ծով, ուր քանի մը շա-
բաթի չափ պտըտեղաւ դիտաւորու-
թիւն ունի կըսեն :

Խաղաղական լրագիր մը ծանուցե-
րէ թէ Գաղղիոյ և Թուրքիոյ մէջ վէճ
ծագեր է սահմանադիրաց պատճա-
ռաւ : Լիվալայի լրագիրն այս լուրը
սուս կը հանէ :

Փոքր Ասիոյ սովալուկ ժողովը-
դոց օգնութեան համար Եգիպտոսի
մէջ բացուած հանգանակութեան
դուանը 10500 լիրայի հասած է :

Պոսնայի դաւառին մէջ հաւաք-
ուածին դուանը ալ 300000 զրչի հա-
սած է :

Կարնոյ դաւառական լրագիրը
կը ծանուցանէ թէ տեղական կառա-
վարութիւնը Բ. Գրան հրամանաւ տե-
ղոյն վաճառականաց հետ պայմա-
նադրութիւն ըրեր է 2500 զրչի եղն
դներու և Լիվալի զրկելու համար,
և արդէն եղներուն մէջ մասն ալ
զրկուեր են :

Կարնոյ ազգայնաց երեւելիներէն
Մեծ. Սարգիս էֆենտի Բասարմաճ-
եան այս շաբաթ Կ. Պոլիս հասաւ,
ուր քանի մը շաբաթ կ'ենալու դի-
տաւորութիւն ունի ինչ ինչ խնդրոց
կարգադրութեան համար :

Կայսերական կառավարութիւնը
մայրաքաղաքի Աւստրո—Հունգա-
րական դեսպանին միջոցաւ խնդրեց
Աւստրո—Հունգարական կառավա-
րութեան, որ Հունգարիոյ ջրանկիւրաց
նշանաւոր գունդին կազմիչ Ձեքէնի
կոմսը Կ. Պոլիս գայ և սահմանուե-
լիք նոր ջրանկիւրաց գունդը կազմէ :
Հետեւաբար յիշեալ կոմսը քիչ օրէն
Կ. Պոլիս կ'ապասուի :

Վեյերոյ շրջանակի թաղապե-
թիւնը Ղալաթիոյ Բէրքէնայէ—բաղա-
րի փողոցը լայնեղ որոշած ըլլալով,
յիշեալ փողոցը բնակող վաճառակա-
նաց և խանութպանաց հրաւեր եղաւ

ՔԱՆՈՒՆՈՒՄ

Դուրս գացած լրագրաց հանդի-
սանքը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագրի-
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լիս, Զինիլի խան, Մատիսի գրասեն-
եակը :
Համարու ծախքը չվճարուած նա-
սակ չընդունուիր :

որ մինչեւ երեք ամիս վաճառանոց-
նին ու բնակարանին պարպեն :

Խրուած ժամանակ և Պոսնայի մէջ
տեղի Աւստրո—Օսմանեան սահմա-
նադրոյն դէմ քանի մը կէտերը լա-
նոշուած չլլալով, Բ. Գրան և Աւս-
տրոյի կառավարութիւնն համաձայ-
նութեամբ որոշեցին խառն յանձ-
նաժողով մը զրկել, որ վերոյիշեալ
երկու դաւառաց սահմանները ճշգ-
րուէ :

Պանք.—Օթմանէն խաղաղաւոր-
ութեամբ 1500 լիրա առնող ամերիկա-
ցի դոլլին անուըն Հովարտ Արամ է :
և ոչ ճօն հաւ :

Կըսուի թէ այս ճարտար գողը
պատուաւոր անձի մ'այցեւորանովը
ներկայացրէ Պանքան, և վրայի
թուղթերն ալ խառ կ'անուըն եւ
եղեր. ուստի կը կարծուի թէ գողու-
թեան գործը ըրած վարկի նամակը
ճօն հաւ անուն մէկու մը տրուած
և այս մարդն ալ գողացած է :

Բերայի ոստիկանութիւնը Բան-
կալիի կողմը դրամաներգներու
գործարան մը գտաւ, որոյ մէջ սուս
մէհիտիէներ ու հինգ ֆրանքոնցներ
կը շինուէին :

Հռչակաւոր Լէֆթէր աւաղակա-
պետին ընկերներէն մին ոստիկանու-
թեան բանակին մէջ յայտնած ըլլա-
լով թէ Լէֆթէր Պրուսայի մօտերը
ծառի մը տակ երեք հազար Օսմա-
նեան լիրա թաղած է, և թէ ինքը
տեղը գիտէ, քանի մը պահապանաց
հետ Պրուսա զրկուեցաւ, որպէս զի
ոսկիներուն թաղուած տեղը ցուցնէ :

Զօրեւորութի օրը Մարեկար երեք
տարեկան Թուրք աղեկ մը՝ մայրը
լաթ լուարու զբաղած միջոցին՝ պա-
տուհանէն փողոց իյնալով անմիջապէս
մեռաւ :

ԸՆԹԱՅԻ ՍՐԺԵԹՂՈՑ

Կ. Պոլիս 3 հոկտ.

Սօսիթիէ մէկէրայի բաժինը Սնգդիլի	7 15
« ֆոխանակութեան »	4 35
Կ. Պոլսոյ Պանքային »	5 45
Քրէտի Ժէնթալ »	11 8
Քրէտի Օսթրո—Թիւրք	
Երկաթուղեաց հիւն	360 1/2
Փոխ. 1863	» 336
» 1865	» 342
» 1869	» 268
» 1872	» 83
» 1873	» 255
Թրամուէլ	0 4 80

ԸՆԹԱՅԻ ԴՐԱՄՈՑ

3 ՀՈՒՏԵՄԲԵՐ

Անգլ. Կոն. դուրուշ	409 1/2
Ն. Կոն. ա. Կոն. »	87 5
Իւլիբրու Բոն. »	89
Դ. Կոն. Կոն. »	54 1/2
Հինգ ֆրանք »	—
Հինգ ֆրանք »	104 25
Պիլիմ »	127 35

բնոր էին նշանակել որպէս զի դերմա-
նական համարարաններու բնաբնութիւնը
պարտաւոր յայտնուի, համարարաններ ուր
ուսանողն իր կեանքը կանցնէ մէկ կողմէ
իրաւագիտութեան, բժշկական գիտութեան
և իմաստասիրութեան ծանր ծանր
ուսմանը հետեւելով միւս կողմէ մարմնա-
կան մարզմանը որպէս մէկ կ'ընտանի և մի-
անգամայն կ'ազդուի երկուստեքէն
թեան աշխարհը ինչպէս որ կերակուր
մանկայ մէջ կրթութիւնը մի միայն մտա-
ւորական կարողութիւնները զարգացնե-
լու մէջ չկայանար այլևս արդէն ծանօթ ու-
սանքն ի գործ կ'ընէ, առ ողջ միտք առ-
ողջ մարմնայ մէջ ։

Այս բարձր ուսմանը վարժարաննե-
րու մօտ՝ պատանիներն որ ճարտարու-
թեան, մասնագիտութեան կ'ուսում ու-
նին, յատուկ դպրոցներ կը գտնեն ուր
իրենց պէտք եղած մասնաւոր գիտելիքը
կուսնին ։

Կանանց դաստիարակութեան համար
ևս մեծ շարժում կայ, որ դործնական օ-
գուտներ պիտի յառաջ բերէ ։ Տիկնայք
Լուիզ Օգո և Օհիւստ Շմիտթ այս նպա-
տակաւ ի Լէյպցիկ կ'աշխատեն թերթ մը
կ'հրատարակեն և օրընդ Միսս Քլինթոն
իգական սեռին համար կրթութեան և
հասարակաց պաշտօններու հետաքրք-
րանքները կ'ազգայնէ ։

Կրթութեան խնդիրն դերմանական
միտքերն ամենէն աւելի զբաղեցնող խնդ-
րերէն է մին է ։ Հիւսիս Երկիր մը որ վար-
ժարանն այնքան հոգատիրութեան ա-
ռարկայ լինի որչափ ի Գերմանիա ։ Ա-
մենէն բարձրագոյն անձինք և ամենէն
մեծ տիկնիկներն իրենց ծամաւորելը իրենց
հարստութիւնն և իրենց փորձագիտութիւ-
նը կրթութեան խնդրոյն կը նուիրեն ։ ա-
ռաջին կարգի դասընթացներ գիտքեր կը
յօրինեն մանկուսոյն համար, քերթ ունեն
մարմնամարզութեան և երաժշտութեան
դասերու համար ստանաւորներ կ'ընեն ։
և ամենէն երեսի յօրինելները չեն ար-
համարահեր անոնց համար եղանակներ յար-
գարելու ։ . . . (1)

Գերմանիոյ մէջ ուսուցչութիւնն ազատ
է համարարանական ուսուցչութենէ զատ
Ամեն մարդ կամ կին յետ քննութեան
իր պաշտօնին միջոցով իր ստանալէն ե-
տե՛ս՝ կարող է իրեն փափաքած տեղը դըպ-
րոց մը հաստատել ։ Նախակրթական ու-
սուցչութիւնն, զոր պետութիւնն պարտա-
ւորեցաւ հիմնել կրթութեան պարտաւո-
րական օրինաց գործադրութիւնն ապա-
հովելու համար՝ էսպէս հասարակագոյն է ։
Դպրոցին խորհուրդներն անոնց տեսչու-
թիւնը կը վարեն ։ այս խորհուրդն անգամ-
ներն են գլխի մէջ հոգւոր հովիւը, շա-
հապետը, և ընտանեաց չորս հայրեր ։ Իսկ
քաղաքներու մէջ, այս մասին երեք ձե-
ռնչաւ քաղաքացիներ, վեց քաղաքացի-
տական ժողովոյ անդամներ և մէկ ազատ
գաղութի տեսչաւ ։ Արուեստագիտական
գաղութներն և ուսումնարաններն նահան-
գին նախագահին իրաւասութեան ներ-
քե են ։ որոս անդամակից կը գտնուին
Պետութեան կողմէ կարգեալ մարդիկ ։
և այսպէս միասին կը կազմեն նահանգին
գաղութական խորհուրդը, որու ներկայա-
ցուցին է վերատեսուչ մ'ամեն շրջանի
մէջ ։

Այս դրութեան շնորհիւ՝ կրթութեան
հարկաւորութիւնը բոլորովին երկրին բա-
րուց և վարուց մէջ մտած է ։ և ընտանե-
աց հօր մ'ազատութիւնն բնաւ իր իրա-
ւանց զրկում մը չտեսներ օրինական
պարտաւորութեան մէջ (2) ։ Որ մը տղե-
կի մը հանգիստեցանք, որ մեզնէ ողոր-

մութիւն խնդրեց ։ երբ հարց ու մտք
ըրինք թէ ինչ պիտոյք ստիպեալ այս
ծայրայեղ միջոցին կը դիմէ, մեր ողորմա-
սիրութիւնը զգուշու համար ուրիշ ա-
պահովագոյն բան մը չգտաւ ըսելու բայց
եթէ պէտք ունէր ստակի «որպէս զի դըպ-
րոցի համար տեսուի մը գնէ» ։ Այս ո-
ղորմասիրութիւնն զոր կարելի է մտաւո-
րական սնունդներ, Գերմանիոյ մէջ ընդ-
հանուր բան մը դարձած է ։ Ուսումնա-
րանին հետաւորութիւնը՝ զիւրի բնակչին
համար՝ երկրորդական կրթութեան ծախ-
քը շատ ծանր կը դրո՛ճէ ։ բայց չքաւոր
աշակերտը՝ որ աշխատութեան մէջ ե-
տանդ և յարատեւութիւն կը ցուցնէ ։ Իր
ուսումն առած քաղքին մէջ քան զինքն
բաղդաւոր և ունեւոր դասընթեր մը կը
գտնէ անվերջալ, այնպէս որ այս դասըն-
կերն զանի իր տունը կը հրաւրէ ։ պէտք
եղած զիբերն անոր կը մատակարարէ ։
և կանանաւոր կերպով երեւոյն իրեն սե-
ղանակից կընէ ։ այս անկեղծ հիւրասիրու-
թիւնն սրտաշարժ սարցոյց մը չէ՝ կըր-
թութեան համարաշխութեան և արժա-
նապատեւութեան ։



Արեւունական շինուածոց Թաշճիւն—
Պաշէ Մեծ ։ Առաքել էֆէնտին Յա-
րութիւնեան՝ երէկ առաւօտ յան-
կարծ իւր մահկանացուն կնքեց ի
հասակի 45 ամաց՝ ի խոր սուգ ըն-
կովելով իւր սիրելի ընտանիքն ու
բարեկամները, և այսօր մեծ հան-
գիսիւ յաղարկաւորութիւնը կա-
տարուելով՝ մարմինն իսկիւտարէն
խաղաղութեան գերեզմանատունը մի-
տադրեցաւ ։

Հանգուցեալ Առաքել էֆէնտին
Բաբերդէն մահուկ հասակի մէջ Կ-
Պոլիս գաղութ իր աշխատասիրութեամբ
ու հանճարով հետզհետէ յառաջա-
ցած, և մինչև Թաշճիւն—Պաշիւթեան
աստիճան հասած էր ։

Վեհանքն և ողորմաւոր, իրեն
գլխիւ աղքատները ձեռնուհանդէպ
հանէր և ծածկաբար առաւ օգնու-
թիւններ կընէր կարօտները ։

Թէև ուսեալ չէր, բայց ուսման
յարգն ու կարեւորութիւնը ճանչա-
լով, ինքնուրուշ աշխատեց վարժա-
րանին կառուցման ծախքն իր քը-
սակէն վճարած, և իր հանգուցեալ
սիրելի միակ երմնեայ դստեր ան-
ւանը նուիրած էր զայն ։

Այս մեծ գործը միայն բաւական
է իր յիշատակն օրհնել տարու ։

Առ Երեսօրեանական ընտրողս
Գատը—Գիւղի
2 Ե Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Ըրոտնախնդիրաց գեկուցման անց-
եալ կիւրակէ Սեպտ. 29 որոշեալ ժա-
մուն Երեսօրեանական ընտրութեան
քուէհամար կատարուեցաւ ։

108 ընտրողներէն 17 անձնք մի-
այն իրենց իրաւունքը յարգեցին՝
զայն ի գործ դնելով, և բացարձակ
առաւելութիւն ստացող չուեցանք, այլ
առաւելագոյն քուէ ստացողներ
որք են՝

Միւրախ	Մուրախեան	7
Լուիսի	Լուիսեան	5
Պետրոս	Պետրոսեան	2

որոց վրայ համեմատական քուէար-
կութիւն պիտի ըլլայ յառաջիկայ
կիւրակէ հօկտ. 6ին, ասոնց և միայն
ասոնց մէջէն երկուք պիտի ընտրու-

ւին երկու հրաժարեալ երեսօրեա-
նաց տեղ ներկայացուելու համար ։

Վասն որոյ վերստին կ'հրաւիրենք
Թաշիւ երեսօրեանական ընտրողնե-
րը ի գործ դնել իրենց իրաւունքը
հասուցանելով քուէնին կամանմամբ
կամ յարադրեալ նամակաւ յառա-
ջիկայ կիւրակէ մինչև ի ժամ հինգեր-
որդէ ի Բանկան Երեւոյնց ուր քը-
ւէտուիլը պատրաստ է ընդ հսկողու-
թեամբ ընտրողական ժողովոյ ։

Որպէս ժամէն յետոյ քուէ չը-
պիտի ընդունուի վերոյգրեալ ցան-
կէն դուրս գտնուող ոչ մէկուն մը չը
կրնար քուէ տրուել ըստ օրինաց
Սահմանադրութեան ։ Նախադա՛հ

Ընտրողական ժողովոյ
Խորէն Վրդ. Պ. Կիւրճեանց
3 հօկտ. 1874
Գատը—Գիւղի

Ի ՏԱՐԱԺԱՄ ՄԱՀ

ՄԵԾ՝ ՏՕԲԹԵՐ ՅՈՎՀԱՆՆԵՍ ԷՖԷՆՏԻՍ
ՄԵԼԻՔԵԱՆ՝

Բացէք ինձ ձեր սեռ առաջատար՝
Բոց երախտեղ սրտից հէք,
Արտօր ալիք ձեզից շաւեր՝
Վա՛հ, ի Զմիւռին զիս տարէք ։
Պա՛հ մ'ոյց ափանց վերեւ՝ ողբոյս
Թողէ՛ք ընտրել զիւր դադար ։
Ձինչ բու տրուի յայս մութ գիւղեր՝
Ձեզեղեալան հնչել լար ։

Եւ չիւրի մը կանգնած վերեւ
Սրգատեղ զերդ նոճի՝
Հողմն ու անձրեւն իր սղերուն
Առած ընկեր՝ լայ՝ կոճի ։

Եւ խօսելով՝ այդ կոյտը ցուրտ
Անուշներու մէջ փորէ ։
Տեսնել ցանկայ թէ՛ ո՞վ կայ հոն,
Թէ՛ նա արեւք կը ննջէ՝ . . . ։

Արդեօք ստոյգ թէ երազ մ'է՝
Իր մարդն յաշխարհ կ'երկի,
Եւ գիւղեր մ'է նորա կեանքը՝
որ մահուան մէջ այդ ունի ։

Կամ կենսաղող արեն է հո՛ր
Լայնեղեղեղ հրդեհէ՛ր,
Որ լոյս աչեր երբ միջնան՝
Նա այն ատեն կը մարի ։

Եւ կամ արդեօք մարդն աշխարհի
Գործաւորն է քրտնաջան,
Որոյ վարձքն է իրեն չափ հող՝
Ուր ա՛լ հանդէս անկեղեղան ։

Անհունութեան մէջ կեանք մարդոյն
Սրգեօք է մի տեսարան,
Որոյ սկիզբ գաւեղտ լինի՝
Վա՛հ, եղբերք միշտ վախճան ։

Կամ գտնուի մը որ կը թովէ
Դայալմիտի՛կ կնքուկով,
Վաղ անաղան մարդն իւր ծաղիք
Ծածկած վիճը զըրկելով ։

Թէ ոչ՝ երկին մ'է կեանք մարդոյն՝
Ձոր պահ մը լոյս, հուսի ծածկէն
Մըրկավար ամպը դէզդդէ՛զ՝
Մինչև որոտը մա՛հ չանթին . . . ։

Հերձե՛ք սա կոյտը, կտրի՛ճ մը կայ հոն,
Ո՛հ, կրնա՛ր թօշնիլ այդ ձախտուն գեղօն,
Այդ կտրե՛քին հո՛ր խաղ կրնա՛ր չիմանիլ
Այնքան իղճն ըլլալ ո՛չ արմատախիլ ։
Ծիծաղեն որ անկեղծ հողւոյն էին ձայն՝
Ինչ, կըցան լուէ ընդ այս գերեզման ։
Եւ ա՛լ չը բացուի՛ն խօսիլ սրտերու՝
Իւր մեղրածորան չրթ եր սիրարկու ։

Կամ զիւր Բիւրակներն պարտիզին ընկեր՝
Երկնաթիռն հողին թէ՛ այժմիկ տեսնէր,
Եւ զերթալոյն սիրոյն ըզՄԵԼԻՔ՝
Պիտի բաժնուէ՛ր արդեօք անոքիկ . . . ։

* Որք սեղանաւոր Երեւոյնց աղայի
Մեղիքեան և Բեհայ Պիկեան Միւրախ ա-
ղայի, աշակերտելով Արեւելի բժշկական
գաղութին՝ 8 տարիէ ի վեր իւր գաղութա-
կան շրջանն աւարտած, բժշկութեան վը-
կայականն բտացած, և այլ և այլ երկր-
ներու ինչպէս նաև վերջին անգամ ըջ-
միւռնից մէջ Տէրութեան զօրանցին ծա-
ռայելէն ետքը, այս անգամ հոն կարճա-
տե բայց անբուժելի հիւսուցումն էն մը
բուժուելով վախճանած է իւր ընտանեոյն
գիրիւ՝ հազիւ 32 տարեկան ։

Դեռ թեք սիրոյ՝ զինչ զոյգ աղանձակ
Թրուած նա՛ր լցին բանիկին հիւսակ,
Դեռ հազիւ լուծած թեղքն շիմնեան՝
Հի՛մ եղերեղիւս լարերը եղան . . . ։

* * *
Դեռ բոյսերու և ծաղկանց
Ուսման հանճարը լցած՝
Որդի՛ք մեծին Անկեղեղայ՝
Անդա՛րձ մնա՛ ի Տրոյալոյ ։

Ուր Մարաշին Պողոսի՛կ
Գեղ պէս դային անձանձիւր ։
Բայց դու մարե՛ս ընտանեոյդ
Ցա՛հն՝ և յապոյն բիւր յուսոյդ . . . ։

Այլ մի՛ գուցէ ի Զմիւռին
Գեղ այլ Պողոտոնը մատնեցին,
Եւ արուեստիդ հորդք պէ՛ս
Անպահարեց Գիտս քեզ ։

Եւ չը կըցա՛ր բուժի՞չդու
Ժան. Թիֆոյէն մահաւոր ։
Եւ մանրանց գիրկն ի զուր
Բացուած՝ մնացի՛ր դու այլուր ։

Վա՛հ, և այլ դու չե՛ս դաւանար . . . ։
Եւ ամուսին վշտահար
Ղրկիս Անիկեղ պի՛ր՝
Որ կրակներովդ այրի . . .

Եւ մանկիկդ՝ քու սրտիկեր՝
Մօրը միտակ ես թողեր,
Որ սիրելեացդ երբ բերի՝
Ըսեն՝ հօրը տիպարն է ։

Բայց ո՛չ, քեզի՛ կըստանեն
Կրկին հայր՝ մայր վախճան ։
Վա՛հ, մըրրիկ նաւը ընկղմեց՝
Այլ չը գտնար արեւհե՛րձ ։

Եւ յարածուի այս կեանքին
Լեւնտիւտան կ'հաշին
Ձո՛հ՝ ծովանցն դու եղար ։
Անդա՛րձ մե՛նէ հեռացար ։

Այլ քու հօգին երկնաշուռ,
Իւր թռչնեղով սիրարկու ։
Թո՛ղ սուսանի ժպիտով
Միշտ սիրելեացդ ի գորով . . . ։

Տէֆէ՛ն ՄԵԼԵ՛ն ։
2 հօկտ. 1874 յՈրթագիւղ

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՑ
ՎԱՐԱՋՄԱՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՄԵԾԱՐՈՅ ԸՆԿԵՐ ։

Խմբագիր Մամաժոյն զոյգն պատ-
րաստած կանոնագրութեան ծրագի-
րը անցեալ կիրակի օր ընդհ. Ժողո-
վոյն մէջ քննութեան առնուելով, մի
քանի յօդուածները վաւերացուելէ
վերջը՝ օրը տարածուելուն համար
շարունակութիւնը յառաջիկայ կիրա-
կի աւուր թողուեցաւ ։

Կը խնդրեմք, Մեծարոյ ընկեր, որ
բարեհաճիք առանց զանցաւորութեան
ներկայ գտնուել յառաջիկայ կիրակի
օր (հօկտ. 6) ժամը ճիշդ 6ին Գոմի-
սիոն խանը ուր կանոնագրութեան
վաւերացումը լրանալէն վերջ Դիւ ա-
նին ընտրութիւնը եւս պիտի կատար-
ւի ։ Առժամանակեայ Ատենապետ
Վարդապետեան ընկերութեան
1874 հօկտ. 2 Գ. Խ. Պիկիկեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՏՈՒՄԸՐ ԸՆՏԵՆԵԿԸՆ
1874 — 1875
ԱՌԱՋԻՆ ՆՈՒՐ ՀԱՅ ՏԻԿԱՆՑ
ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Աշխատասիրեաց Տ. Սրբուհի Ա. երեցեանց
Տպեալ ի Տիֆլիս
1874

Այս կարեւոր եւ հմտալից գործը՝
մայրաքաղաքիս ամեն հայ գրավա-
ճաւաց քով կը գտնուի զին 25 զրէ՛

Ի Ն Բ Ն Օ Գ Ն Ո Ւ Թ Ի Ն
Նիւրեմբեր, Վարձաւ և Թարգման-
ըստաւեալ Կենսագրութեան
Հիւրնակ
ՍԱՄՈՒԷԼ ՍՄԱՅԼՍ
Թարգմանեաց Գաղղիերէնէ
Հանդերձ ծանօթութեամբ և յաւել-
ուածովք

Ս. ԷԹԵՐՔԵԱՆ
Ամեն հայ գրավաճաւաց քով կը
գտնուի ։
Դին կէս արծաթ մէ՛ծիւս

